ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հուլիսի 2006թ. N 400

ք. Ստեփանակերտ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ [*6)] ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի *30.1-ին* [*2),*6),*8)] և «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածներին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել հարկային մարմնի կողմից հարկ վճարողների [*6)] վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի և ցանկերի ձևերը (NN 1-13)՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 25-ի «Հաշվետու տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած և ապառքներ, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների գծով պարտավորություններ կուտակած, հարկեր վճարած հարկ վճարողների (ապահովադիրների) վերաբերյալ տվյալների հրապարակման կարգը հաստատելու մասին» N 151 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված N 1
ԼՂՀ կառավարության
31 հուլիսի 2006 թ
N 400 որոշման

ԿԱՐԳ

ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ [*6)] ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում է «Հարկերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի *30.1-ին*[*8)] հոդվածով, [*6)] «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածով նախատեսված դեպքերում սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված հարկ վճարողների [*6)] վերաբերյալ տվյալների հրապարակման գործընթացը:

2. Սույն կարգով սահմանված ձևով և կարգով հարկային մարմինը մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հուլիսի 1-ը հրապարակում է՝

ա) «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի համաձայն հաշվետու տարվա արդյունքներով (ռեզիդենտների շահութահարկի տարեկան հաշվարկի, ոչ ռեզիդենտների *տարեկան եկամուտների մասին հաշվարկի*[*6)] հիման վրա) 1.0 մլն դրամ և ավելի հարկային վնասներ հայտարարագրած հարկ վճարողների մասին տվյալները (N 1 ձև):

Ուժը կորցրած է ճանաչվել [*3)]

բ) հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ 1.0 մլն. դրամ և ավելի ապառք *(չվճարված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գումար)*[*4)] կուտակած հարկ վճարողների մասին տվյալները (N 3 ձև).

գ) *(ուժը կորցրած է ճանաչվել)* [*5)]

դ) հաշվետու տարվա արդյունքներով *Արցախի*[*8)] Հանրապետության պետական բյուջե 10.0 մլն դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների վերաբերյալ տվյալները (N 5 ձև) [*8)].

ե) հաշվետու տարվա արդյունքներով *Արցախի*[*8)] Հանրապետության պետական բյուջե *10.0 մլն դրամ*[*8)] և ավելի *եկամտային հարկ*[*6)] վճարած հարկային գործակալների *(առևտրային կազմակերպությունների)*[*1)] վերաբերյալ տվյալները (N 7 ձև).

զ) (ուժը կորցրած է ճանաչվել) [*8)]

է) *(ուժը կորցրած է ճանաչվել)* [*6)]

ը) հաշվետու տարվա ընթացքում աշխատողի՝ աշխատանքի ընդունումն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցված և (կամ) գրանցման հայտ չներկայացրած հարկ վճարողների (առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի) վերաբերյալ տվյալները (N9.1 ձև) :[*8)]

3. Սույն կարգով սահմանված ձևով և կարգով հարկային մարմինը մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը հրապարակում է՝

ա) առաջին 300 խոշոր հարկ վճարողների (առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի)[*7)] *ցանկերը և նրանց կողմից ֆինանսական տարվա սկզբից վճարված հարկերի մեծությունները՝ հաշվարկված աճողական կարգով (N 10 ձև).*[*1);*5)]

բ) *(ուժը կորցրած է ճանաչվել)* [*6)]

գ)*(ուժը կորցրած է ճանաչվել)* [*6)]

դ) հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների երեք և ավելի խախտում թույլ տված կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ցանկը (N 13 ձև): Ընդ որում, ցանկում ներառվում են այն կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի վերաբերյալ տվյալները, որոնց մոտ տվյալ եռամսյակում արձանագրվել են հսկիչ-դրամարկղային մեքենաների գրանցման կարգի և (կամ) շահագործման կանոնների խախտման երրորդ և ավելի դեպքերը:

4. Սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված՝ հարկ վճարողների [*6)] վերաբերյալ տվյալները *հարկային մարմնի*[*8)] կողմից հրապարակվում են *հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում*[*5)]:

5. Հիմք ընդունելով հարկային մարմնի կողմից անցկացված ստուգումների արդյունքներն ու սույն կարգի 2-րդ և 3-րդ կետերում նշված տեղեկությունների (տվյալների) համար հիմք հանդիսացող հաշվարկներում [*6)] հարկ վճարողների կողմից *Արցախի Հանրապետության օրենսդրությամբ*[*8)] սահմանված կարգով ինքնուրույնաբար ճշգրտումներ կատարելու հանգամանքը, հարկ վճարողների դիմումների հիման վրա, *հարկային մարմինը*[*8)] կարող է հրապարակել հարկ վճարողների[*6)] վերաբերյալ սույն կարգով նախատեսված տվյալների ճշգրտումներ՝ մինչև սահմանված ժամկետում հերթական ցանկի հրապարակման օրը:

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 2
ԼՂՀ կառավարության
31 հուլիսի 2006 թ.
N 400 որոշման

ՁԵՎ N 1

Ց Ա Ն Կ

200.....ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 1.0 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՎՆԱՍՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

NN ը/կ	ՀՎՀՀ	Կազմակերպության անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Վնասի մեծությունը (հազ. դրամ)
1	2	3	4	5

ՁԵՎ N 2

Ց Ա Ն Կ

200.....ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ՝ ԿԱՏԱՐՎԱԾ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ 1.0 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՎՆԱՍՆԵՐ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

(ուժը կորցրած է ճանաչվել) [*3)]

ՁԵՎ N 3

Ց Ա Ն Կ

200.....ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 1.0 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ ԱՊԱՌՔ ԿՈՒՏԱԿԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

NN ը/կ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Ապառքի գումարը (հազ. դրամ)
1	2	3	4	5

Ձև N 4

Ց Ա Ն Կ

200.....ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱՆ ՆԱԽՈՐԴՈՂ ԵՎ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՈՒՄ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ 50 ԵՎ 100 ՏՈԿՈՍ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂ ՈԵԶԻԴԵՆՏ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(ուժը կորցրած է ճանաչվել) *5)

Ձև N 5

Ց Ա Ն Կ

200.....ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ *ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ* *8)
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ 10.0 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ

NN ը/կ	ՀՎՀՀ	Կազմակերպության անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Վճարված գումարը (հազ. դրամ)
1	2	3	4	5

Ձև N 6

Ց Ա Ն Կ

200.....ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԼՂՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ 1.0 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ ՎՃԱՐԱԾ ԲԱՆԿԵՐԻ

(ուժը կորցրած է ճանաչվել) *8)

Ձև N 7

Ց Ա Ն Կ[*1)]

200.....ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ *8)
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ 10.0 ՄԼՆ ԴՐԱՄ*[*8)] *ԵՎ ԱՎԵԼԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ* *6) *ՎՃԱՐԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԻ (ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ)*

NN ը/կ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Վճարված *եկամտայինհարկը* *6) (հազ. դրամ)
1	2	3	4	5

ՁԵՎ N 8

Ց Ա Ն Կ

200.....ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ, ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԱՐՏՈՆԱԳՐԵՐ ՈՒՆԵՑՈՂ, ՍԱԿԱՅՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ՉԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ԶՐՈՅԱԿԱՆ

(ուժը կորցրած է ճանաչվել) *8)

ՁԵՎ N 9

Ց Ա Ն Կ

200.....ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ 1.0 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ *ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ* *2) ՎՃԱՐՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿՈՒՏԱԿԱԾ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ

(ուժը կորցրած է ճանաչվել) *6)

ՁԵՎ N 9.1 *8)

Ց Ա Ն Կ

20_____ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՎԵՏՈՒ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՇԽԱՏՈՂԻ՝ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՉԳՐԱՆՑԱԾ ԵՎ (ԿԱՄ) ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏ ՉՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ (ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ)

Հ/Հ	*ՀՎՀՀ-ն*	*Հարկ վճարողի անվանումը*	*Հարկ վճարողի գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրը*
1	*2*	*3*	*4*

ՁԵՎ N 10

Ց Ա Ն Կ

ԱՌԱՋԻՆ 300 ԽՈՇՈՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ (ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ)[7] *ՈՒ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՀԱՐԿԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ* *1),*5)

NN ը/կ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու	Ֆինանսական տարվա սկզբից հարկ վճարողի կողմից *Արցախի Հանրապետության* *8) պետական բյուջե վճարված հարկերի ընդհանուր գումարը (հազ.դրամ)

			վայրը	ընդամենը	այդ թվում			
					ուղղակի հարկեր (այդ թվում՝ շահութահարկ, *եկամտային հարկ* *6))	անուղղակի հարկեր (այդ թվում՝ ԱԱՀ, ակցիզային հարկ)	հաստատագրված վճարներ	այլ հարկեր, տուրքեր և պարտադիր վճարներ

Ձև N 11

ՑԱՆԿ[*1)]

3 ՄԼՆ ԴՐԱՄ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ[*2)] *ՎՃԱՐ ՎՃԱՐՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԴԻՐՆԵՐԻ (ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ԵՎ ՆՐԱՆՑ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՍԿԶԲԻՑ ՎՃԱՐՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ*[*2)] *ՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ*

(ուժը կորցրած է ճանաչվել) [*6)]

Ձև N 12

ՑԱՆԿ

50 ԵՎ ԱՎԵԼԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱԿԱՅԻՆ ԹԻՎ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԱԾ ԱՊԱՀՈՎԱԴԻՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

(ուժը կորցրած է ճանաչվել) [*6)]

Ձև N 13

ՑԱՆԿ

ՀՍԿԻՉ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ (ԿԱՄ) ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ 3 ԵՎ ԱՎԵԼԻ ԽԱԽՏՈՒՄ ԹՈՒՅԼ ՏՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՉԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ

NN ը/կ	ՀՎՀՀ	Հարկ վճարողի անվանումը	Հարկ վճարողի գտնվելու վայրը	Հարկ վճարողի ֆիրմային անվանումը (առկայության դեպքում)
1	2	3	4	5

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ՆԱԽԱՐԱՐ Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**1) ԼՂՀ կառավարության 31.10.06թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 400 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» թիվ 535 որոշման խմբագրությամբ*

**2) ԼՂՀ կառավարության 18.03.08թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին» թիվ 216 որոշման խմբագրությամբ*

**3) ԼՂՀ կառավարության 10.06.10թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի թիվ 400 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 277-Ն որոշման խմբագրությամբ*

**4) ԼՂՀ կառավարության 28.03.12թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 31-ի N 152 և 2006 թվականի հուլիսի 31-ի N 400 որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 174-Ն որոշման խմբագրությամբ*

**5) ԼՂՀ կառավարության 19.04.13թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 400 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 202-Ն որոշման խմբագրությամբ*

**6) ԼՂՀ կառավարության 04.03.14թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 400 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 118-Ն որոշման խմբագրությամբ*

**7) ԼՂՀ կառավարության 25.05.15թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 400 որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» N 302-Ն որոշման խմբագրությամբ:*

**8) ԱՀ կառավարության 11.04.18թ. «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 400 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 248-Ն որոշման խմբագրությամբ:*